ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ 2014 Թ. ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԲԵՐՅԱԼ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժինը 2014թ. ընթացքում հետևել է մարզի ավագանիների և համայնքի ղեկավարների որոշումների համապատասխանությանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Նշված ժամանակահատվածում մարզի ավագանիների կողմից ընդունվել է 1282 որոշում, որոնք հիմնականում վերաբերվում են համայնքների բյուջեների ընդունմանը, դրանցում կատարված գումարային և հոդվածային վերաբաշխումներին, համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունների, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի, դրույքաչափերի հաստատմանը, համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օտարմանը համաձայնություն տալուն և ներհամայնքային այլ խնդիրների: Անհամապատասխանությունների և թերությունների հայտնաբերման դեպքում որոշումները վերադարձվել են համայնք՝ համապատասխան ուղղումների, որոնք սահմանված կարգով ուղղվել և վերադարձվել են մարզպետարան: Մասնավորապես նշված ժամանակահատվածում ուղղվել և մարզպետարան են վերադարձվել համայնքի ղեկավարների և ավագանիների կողմից ընդունված 30 որոշում: Պատասխանվել է քաղաքացիների մի շարք դիմումների, որոնցում բարձրացված հարցերին տրվել են համապատասխան լուծումներ կամ ցույց են տրվել ուղղություններ: Տարվա ընթացքում տրվել են բանավոր խորհրդատվություններ՝ ինչպես քաղաքացիների, այնպես էլ համայնքի ղեկավարների աշխատակազմերի աշխատակիցների:

Փոխառության պայմանագրով նախատեսված սերմացուի չվճարված գումարի բռնագանձման պահանջով մարզպետարանի անունից դիմվել է ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան: Հայցերը բավարարվել են, կատարողական թերթերը ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն:

Պետական բյուջեին հասցված վնասը վերականգնելու համար ռեգրեսիվ պահանջ է ներկայացվել Գլաձորի միջնակարգ դպրոցի տնօրենին: Տնօրենը պարտավորվել է իր ոչ իրավաչափ հրամանի պատճառով բյուջեին հասցված վնասը վերականգնել և կազմվել է ժամանակացույց:

Մարզիտորիումի նիստերում ներկայացվել է ՀՀ օրենքներում, ՀՀ կառավարության որոշումներում և այլ իրավական ակտերում կատարված փոփոխությունները և դրանցից բխող տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրները:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն. ՄԱՂԱՔՅԱՆ